ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

« 25 » « օգոստոս » 2020 թ
ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 84
ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀՀ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն » պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2020 թվականի օգոստոսի 21-ի գրությունը և Նորայր Մարտիրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2020 թվականի օգոստոսի 26-ից Նորայր Մարտիրոսյանին նշանակել ՀՀ «Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր 5 / հինգ/ տարի ժամկետով:

2. Արա Հովհաննիսյանին ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատաքները:

8/25/2020

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ